ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար «Նոր Գեղիի ակադեմիկոս Գ. Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի նոյեմբերի 30-ին կնքված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/1 գնման պայմանագրում 2021 թվականի նոյեմբերի 16-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1	Կապալառու կազմակերպիության կողմից ներկայացված գրություն
Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/1 պայմանագրի օրացուցային գրաֆիկի փոփոխություն
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 8.5 և 8.6 կետեր:

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
30.11.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/1 գնման պայմանագրի

ք. Երևան «16» «11» 2021թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Ռ. Զաքարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով «Նոր Գեղիի ակադեմիկոս Գ. Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի վերակառուցման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 30.11.2020թ. կնքված ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/1 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.6 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ 25.02.2021թ. կնքված N1 համաձայնագրի օրացուցային գրաֆիկում <<160>> թիվը փոխարինել <<190>> թվով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011027761
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
«Զեթ-Պրոֆիլ» ՍՊԸ
ք. Արտաշատ, Մարքսի 83
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 1150000331970100
ՀՎՀՀ 04214335
Տնօրեն՝

_____ Ռ. Զաքարյան
(ստորագրություն)
Կ.Տ